



Համարը N 246

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2006.05.08/13(22)

Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 18.05.2006

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Ստեփանակերտ

Ընդունման ամսաթիվը 26.04.2006

Ստորագրման ամսաթիվը 26.04.2006

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ ՀՈՂԱՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"26" ապրիլի 2006թ.

N 246

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՂԱՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 31-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում **հողաշինարարության** կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հավելված
ԼՂՀ կառավարության
«26» ապրիլի 2006թ.
թիվ 246 որոշման

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՂԱՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության **հողաշինարարության** կազմակերպումը:

2. Հողաշինարարությունը հողային հարաբերությունների կարգավորմանը, հողային պաշարների կառավարմանը, հողերի օգտագործման ու պահպանության կազմակերպմանը, հողերի մոնիթորինգին, **հողաշինարարության** տարածքային և ներտնտեսային ծրագրերի (փաստաթղթերի) կազմելուն նպատակաուղղված պետական միջոցառումների համալիր է, որն ապահովում է՝

ա/ հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանման ծրագրավորումը և կազմակերպումը՝ անկախ սեփականության սուբյեկտներից ու տնտեսավարման ձևերից.

բ/ գյուղատնտեսական հողերի պահպանման համապետական ու տարածքային ծրագրերի մշակումը.

գ/ հողամասերի հանութագրումը, տեղանքում սահմանազատումն ու ամրացումը, հողամասերի հատակագծերի, հողամասերի (այդ թվում՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող)

օտարմանը կամ օգտագործման տրամադրելուն վերաբերող փաստաթղթերի նախապատրաստումը.

դ/ հանրապետական, շրջանային, համայնքային, միջհամայնքային, ներտնտեսական հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը.

ե/ խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերի՝ ջրային և հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ ու քիմիական նյութերի կողմից ախտահարումից պաշտպանումը, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողերը պահպանելու ու դրանց բերրիությունը բարձրացնելու համապետական և տարածքային ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը.

զ/ հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը.

է/ շրջանների, համայնքների վարչական սահմանների, սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը.

ը/ **հողաշինարարության** գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական ու մշակութային և այլ հետազոտական ու հանութագրական աշխատանքների իրականացումը.

թ/ հողային ֆոնդի պետական հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը.

ժ/ հողային պաշարների վիճակի ու դրանց օգտագործման կադաստրային և թեմատիկ քարտեզների ու ատլասների կազմումը.

ժա/ անշարժ գույքի միասնական կադաստրի վարումը.

ժբ/ հողերի որակական և քանակական փոփոխությունների նկատմամբ համակարգված դիտարկումների (մոնիթորինգ) իրականացումը.

ժգ/ նոր հողամասերի կազմավորման, հողամասերի հանութագրման, սահմանազատման, միավորման և բաժանման, գոյություն ունեցող հողամասերի կարգավորման միջոցառումների իրականացումը.

ժդ/ հողերի գոտիավորման, հողօգտագործման և դրանց նկատմամբ սահմանափակումների կանոնակարգումը:

3. **Հողաշինարարության** օբյեկտներ են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների տարածքները, դրանց առանձին մասերը (հողատարածքները) և հողամասերը:

4. Հողաշինարարությունն իրականացվում է հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա, որոնք կազմվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաև առանձին հողամասերի և հողատարածքների համար: Հողաշինարարական փաստաթղթերի մշակման համար հիմք են հանդիսանում **հողաշինարարության** իրականացման մասին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հողաշինարարություն իրականացնելու վերաբերյալ պայմանագրերը, ինչպես նաև դատարանի վճիռները:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հողաշինարարությունն իրականացվում է համապետական ծրագրային փաստաթուղթ հանդիսացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին և ընդգրկում է հողերի օգտագործման ու պահպանության համապետական համալիր միջոցառումներ, հողերի բնական գյուղատնտեսական շրջանցումը, դրանց տարածազնահատման գոտիները, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառային ֆոնդի հողերի սահմանազատումն ու նկարագրությունը, նոր հողերի յուրացման ռեզերվներն ու հնարավորությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմման, նախագծման առաջադրանքը պետք է բխի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծից:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի գրաֆիկական մասերը ներկայացվում են 1:200000 մասշտաբի տեղագրական քարտեզի վրա:

6. Շրջանի տարածքում (միջհամայնքային) հողաշինարարությունն իրականացվում է շրջանների հողային պաշարների կառավարման սխեմայի միջոցով, որը սահմանում է համայնքների վարչական սահմանների, հանգստի գոտիների, առողջարանային, պատմամշակութային արժեք ներկայացնող տարածքների, օգտակար հանածոների հանքավայրերի սահմանազատման հիմնավորումները, ճշգրտումն ու նկարագրությունը, այդ թվում՝ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի վերաբաշխման, հողօգտագործման կտրուկաձևության (հատվածականության) վերացման մասով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Շրջանի հողային պաշարների կառավարման սխեմայի կազմման առաջադրանքը պետք է բխի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայից, որում պետք է հաշվի առնվեն նաև շրջանի տարածքային հատակագծման նախագծով սահմանված դրույթները:

Շրջանի հողային պաշարների կառավարման սխեմայի գրաֆիկական մասերը ներկայացվում են 1:25000 կամ 1:50000 մասշտաբի տեղագրական քարտեզի վրա:

7. Ներհամայնքային հողաշինարարությունն իրականացվում է համայնքի հողերի գոտիավորման և

օգտագործման սխեմաների միջոցով՝ տարածքի կազմակերպման, հողերի արդյունավետ կառավարման, պահպանության և օգտագործման նպատակով՝ առանձին համայնքի տարածքում, համայնքի միջոցների հաշվին: Համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները կազմվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայում պարտադիր հաշվի են առնվում շրջանի հողային պաշարների կառավարման սխեմայով սահմանված դրույթները:

8. Առանձին հողամասերի կամ հողատարածքների հողաշինարարությունն իրականացվում է հողաշինարարական նախագծերի միջոցով՝ հողօգտագործման սահմանների հանութագրման, ճշգրտման, նոր առաջացած հողամասերի սահմանների տեղադրման, ամրացման, հողամասերի (այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության) օտարման կամ օգտագործման տրամադրելու համար փաստաթղթերի նախապատրաստման, նոր հողերի յուրացման, հողերի միավորման, բազմամյա տնկարկների հիմնման, ցանքաշրջանառության կիրառման, խախտված հողերի վերականգնման, հողաշերտերն անապատացումից, ջրային և հողմային հողատարումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի կողմից ախտահարումից պաշտպանելու և այլ հողապաշտպանական միջոցառումների իրականացման նպատակով՝ հողամասերի կամ դրանց մի մասի տարածքում՝ հողամասերի սեփականատերերի կամ հողօգտագործողների միջոցների հաշվին:

Սույն կետում նշված փաստաթղթերը կազմվում են համայնքի գոտիավորման և օգտագործման սխեմաներով սահմանված դրույթներին համապատասխան:

Հողերի միավորման միջոցառումներն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներին համապատասխան:

9. Հողաշինարարական փաստաթղթերը հաստատվում են պատվիրատուի կողմից:

10. Նոր հողամասերի կազմավորման, հողամասերի հանութագրման, հողամասերի հատագծերի պատրաստման, սահմանազատման, միավորման և բաժանման, գոյություն ունեցող հողամասերի օտարման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերին ներկայացվող պահանջները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, այլ հողաշինարարական փաստաթղթերի (բացառությամբ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների) կազմին և բովանդակությանը, դրանց տեքստային և գրաֆիկական մասերին ներկայացվող պահանջները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ:

II. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

11. Հողաշինարարությունը կազմակերպվում և իրականացվում է հետևյալ հիմնական փուլերով՝
ա/ հողաշինարարական փաստաթղթերի տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում.
բ/ հողաշինարարական փաստաթղթերի կազմում և հաստատում.

գ/ նախագծի իրականացում, հողամասերի սահմանների ամրացում, նախագծով սահմանված միջոցառումների իրականացում.

դ/ նոր հողամասերի կազմավորման, հողամասերի հանութագրման, հողամասերի հատակագծերի պատրաստման, սահմանազատման, միավորման և բաժանման, սահմանների ամրացման և գոյություն ունեցող հողամասերի կարգավորման, հողահատկացման ելակետային փաստաթղթերի նախապատրաստման միջոցառումների իրականացում.

ե/ հողօգտագործման և հողերի մոնիթորինգ (հողի վիճակի, նպատակային օգտագործման և գնի դիտարկումների, դրանց հետազոտությունների և հետախուզումների իրականացում), որը ներառում է նաև հողերի վրա ամրակայված գույքի մոնիթորինգը.

զ/ հողաշինարարական փաստաթղթերի կիրարկման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված պահանջների, հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության ապահովում:

III. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

12. Պատվիրատուն հողաշինարարական փաստաթղթերի մշակման համար կազմում է տեխնիկական առաջադրանք:

Տեխնիկական առաջադրանքի կազմին ու բովանդակությանը (բացառությամբ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների) ներկայացվող պահանջները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ համաձայնեցնելով սույն կարգի 10-րդ կետում նշված մարմինների հետ:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների տարածքների և դրանց առանձին հատվածների համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջադրանքներն ենթակա են համաձայնեցման՝ սույն կարգի 10-րդ կետում նշված մարմինների և շրջանների վարչակազմերի ղեկավարների հետ:

14. Համայնքների համար տեղական բյուջեների միջոցների հաշվին մշակվող հողաշինարարական փաստաթղթերի (բացառությամբ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների) տեխնիկական առաջադրանքներն ենթակա են համաձայնեցման՝ համապատասխան շրջանների վարչակազմերի ղեկավարների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ:

15. Առանձին տարածքների և հողամասերի հողաշինարարական նախագծերի առաջադրանքները համաձայնեցվում են համայնքների ղեկավարների հետ:

16. Սույն կարգի 13-րդ կետում նշված մարմիններն առաջադրանքն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում դրա վերաբերյալ առաջարկությունները և առարկությունները ներկայացնում են պատվիրատուին:

17. Համայնքի համար մշակվող հողաշինարարական փաստաթղթերի առաջադրանքը կարող է սույն կարգի 14-րդ կետում նշված մարմիններ ներկայացվել միայն համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո:

18. Պատվիրատուն սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերում նշված մարմինների առաջարկությունների ու առարկությունների հիման վրա լրամշակում և հաստատում է առաջադրանքը:

IV. Հողաշինարարական Փաստաթղթերի ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

19. Հողաշինարարական փաստաթղթերի առաջադրանքի հիման վրա աշխատանքներն իրականացվում են լիազորված մարմինների կողմից կամ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված կապալառուի միջոցով:

- 20. Հողաշինարարական փաստաթղթերը կազմվում են հետևյալ հիմնական փուլերով՝
 - ա/ գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացում.
 - բ/ հողագիտական, երկրաբուսաբանական և այլ հետազոտումներ ու հետախուզումներ.
 - գ/ հողի որակական գնահատում (բոնիտում).
 - դ/ հողերի հաշվառում՝ ըստ նպատակային նշանակության, սեփականության ձևերի.
 - ե/ նախագծի կազմում և հաստատում:

21. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ռեսուրսների կառավարման գլխավոր սխեման և շրջանների հողերի կառավարման սխեմաները սույն կարգի 10-րդ կետում նշված մարմինների ու շրջանների վարչակազմերի ղեկավարների հետ համաձայնեցումից հետո հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից:

22. Առանձին տարածքների և հողամասերի հողաշինարարական նախագծերը համայնքի ղեկավարի հետ համաձայնեցումից հետո հաստատում է պատվիրատուն:

23. Հողաշինարարական փաստաթղթերը մշակվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նորմատիվ իրավական ակտերով, Նորմատիվ տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան: Համապատասխանության մասին եզրակացությունը (բացառությամբ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների) տալիս է հողաշինարարական փաստաթուղթը կազմող կապալառու կազմակերպությունը, որը նշված եզրակացության հավաստիության համար կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

V. Հողաշինարարական Փաստաթղթերով ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆՑՈՒՄԸ

24. Հողաշինարարական փաստաթղթերում ընդգրկված հողերի արդյունավետ օգտագործմանն ու պահպանությանը, Նոր հողերի յուրացմանը և սույն կարգի 5, 6, 7 և 8-րդ կետերով նախատեսված մյուս միջոցառումներն իրականացվում են փաստաթղթերով սահմանված դրույթներին, Նորմերին, պահանջներին, հանձնարարականներին, ինչպես նաև ժամկետներին համապատասխան՝ **հողաշինարարության** ոլորտի Նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

25. Առանձին տարածքների և հողամասերի հողաշինարարական նախագծերն իրականացվում են լիազորված պետական մարմնի կամ հողաշինարարական աշխատանքներ կատարելու լիցենզիա ունեցող անձանց միջոցով՝ գեոդեզիական և հողաշինարարական մեթոդներով՝ նախագծով սահմանված դրույթներին համապատասխան:

26. Նախագծին համապատասխան կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման և արտացոլվում են հողամասի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում, ինչպես նաև հողերի ընթացիկ հաշվառման տվյալներում:

VI. ՆՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ, ՀԱՆՈՒԹԱԳՐՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ, ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ

ԲԱԺԱՆՄԱՆ, ԱՌԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

27. Նոր հողամասերի կազմավորման, հողամասերի հանութագրման, սահմանազատման, միավորման և բաժանման, առկա հողամասերի կարգավորման միջոցառումներն իրականացվում են լիազորված պետական մարմնի կամ համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով՝ հողամասի սեփականատիրոջ կամ նրա կողմից լիազորված անձի դիմումի (հայտի) հիման վրա:

28. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը ներառում է հետևյալ միջոցառումները՝

ա/ հողամասի /հողամասերի/ հանութագրում,
բ/ հողամասի /հողամասերի/ հատակագծ/եր/ի նախապատրաստում,
գ/ հողամասերի սահմանների տեղափոխում բնության մեջ և դրանց ամրացում,
դ/ հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու՝ հրապարակային սակարկության կազմակերպման համար անհրաժեշտ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում:

Սույն կետին համապատասխան նախապատրաստված բոլոր փաստաթղթերը ներառվում են հողամասի հողաշինարարական գործում:

VII. ՀՈՂԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

29. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր հողերը մոնիթորինգի օբյեկտ են: Հողերի մոնիթորինգն իրականացվում է համատարած և ընտրանքային դիտարկումների ձևով՝ սահմանված ժամանակահատվածների համար:

30. Հողերի մոնիթորինգի խնդիրներն են՝

ա/ հողերի վիճակի փոփոխության ժամանակին բացահայտումը, այդ փոփոխությունների կանխատեսումը և բացասական գործընթացների հետևանքների կանխարգելման ու վերացման մասին հանձնարարականների մշակումը:

բ/ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման, հողերի արդյունավետ օգտագործման, **հողաշինարարության**, հողերի օգտագործման ու պահպանման նկատմամբ պետական վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը:

31. Հողերի մոնիթորինգն իրականացվում է համապետական և տարածքային ծրագրերին համապատասխան:

VIII. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԼՊԱՏԱԿԱՑԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

32. Հողաշինարարական փաստաթղթերի կիրարկման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված պահանջների, հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողությունն ապահովվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, քաղաքացիների ու իրավաբանական անձանց կողմից հողերի նպատակային օգտագործմանը և պահպանությանն ուղղված հատուկ պահանջների, նորմերի, կանոնների կատարումն ապահովելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխան:

33. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի և շրջանների հողային պաշարների կառավարման սխեմաների իրականացման նկատմամբ հսկողությունն ապահովվում են հողային ռեսուրսների կառավարման լիազոր մարմինները՝ իրենց իրավասությունների սահմաններում:

34. Համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում են համապատասխան շրջանների վարչակազմերի ղեկավարները:

35. Առանձին տարածքի կամ հողամասի հողաշինարարական նախագծի իրականացման նկատմամբ հսկողությունն ապահովվում է համապատասխան համայնքի ղեկավարը:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ